# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

**ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12**
**հեռ. (0264) 2-34-23**

Ձեր 01/08/68 առ 10.01.2012թ.
Ելից N Ա-029 «2» 02 2012թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պողոսյան

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի՝ 30.12.2011թ. N 01/16/8218-11 հանձնարարականի, տեղեկացվում է, որ Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կողմից զբաղեցրած հողամասերը պետությանը հետ նվիրելու առաջարկությունը քննարկվել է Գավառ համայնքի ավագանու 17.01.2012թ. թիվ 1 նիստում:

Ձեզ է ներկայացվում Գավառ համայնքի ավագանու 17.01.2012թ. թիվ 1 նիստի թիվ 3 որոշման քաղվածքը:

Առդիր 1 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատ.՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի
գլխավոր մասնագետ՝ Ա. Ալեքսանյան
հեռ. 2-21-89

03 02 2012թ
548/12

*ՔԱՂՎԱԾՔ*
*ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.01.2012թ.*
*ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ*

Կազմված է 18.01.2012թ. ք. Գավառ

Նիստին մասնակցում էին Գավառ համայնքի ավագանու 15 անդամներից 8-ը՝
Գ. Բաղեյան, Պ. Մարտիրոսյան, Ս. Ամիրխանյան, Ա. Դադոյան, Վ. Միրիքյան
Ա. Դվոյան, Կ. Խաչիկյան, Ա. Ղազազյան

ՈՐՈՇՈՒՄ 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԵՏ ՆՎԻՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 11 հոդվածի 5-րդ մասի և 16 հոդվածի 20 կետի դրույթներով, քննարկելով ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի՝ 30.12.2011թ. N 01/16/8218-11 հանձնարարականից բխող Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրագտնվող պետական հողամասերը պետությանը հետ նվիրելու վերաբերյալ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.01.2012թ. N 01/08/68 առաջարկությունը

*ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող պետական սեփականություն հանդիսացող «Գավառի հիվանդանոց», Բժշկական ուսումնարան, ավտոտնակ, պոմպակայան, քոլեջի ուսումնական շենք, վարչական շենք անշարժ գույքերի կողմից զբաղեցրած հողամասերը պետությանը հետ նվիրելու առաջարկությունը համարել ոչ նպատակահարմար և մերժել:

ԴԵՄ 0

ՁԵՌՆՊԱՀ՝ 0

ԿՈՂՄ 8

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑԱՎ ՄԻԱՁԱՅՆ

| | |
|---|---|
| Ա. Դադոյանը | Ս. Ամիրխանյան |
| Գ. Բաղեյանը | Վ. Միրիքյան |
| Կ. Խաչիկյան | Վ. Բախտիկյան |
| Պ. Մարտիրոսյան | Ա. Դվոյան |

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ՍԱՆՈՒԿՅԱՆ